«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ

25.06.2026թ.

Որոշում

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ «Կարգ») 32-րդ կետի 19-րդ ենթակետը «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով,

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-26/56» ծածկագրով գնման ընթացակարգի 2, 12, 11-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից էր ճանաչվել ՆԵՐԱԿ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովի կողմից ՆԵՐԱԿ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից համակարգի միջոցով ներկայացրած հայտում արձանագրվել էին անհամապատասխանություններ հրավերի պահանջներին, մասնավորապես. ներկայացված չէր առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը: Ներկայացված փաստաթղթերն էլեկտրոնային ստորագրված չէին: Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրն անհրաշեշտ էր ներկայացնել https://e-register.moj.am/hy/search/companies կայքի հղումով: Առաջնորդվելով «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-26/56» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.9 կետով՝ ՆԵՐԱԿ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ին առաջարկվել էր մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված

անհամապատասխանությունները: Սահմանված ժամեկետում մասնակցի կողմից շտկում չկատարելու հիմքով 2, 12, 11-րդ չափաբաժինների մասով ՆԵՐԱԿ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել: Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն մասնակցի կողմից սահմանված ժամկետում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելը կամ ամբողջական չշտկելը հանդիսանում է գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Այսպիսով, ՆԵՐԱԿ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն թույլ է տվել գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, ինչը հիմք է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) համաձայն վերջիններիս գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունները հրապարակված են gnumner.am և միարժամանակ կցված են eauction.armeps.am հարթակներում:

Հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված փաստերը՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն
ծածկագիրը	չափաբաժնի			Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
	համարը	անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
«ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-26/56»	2, 11, 12	2-Աղբի տոպրակ 60լ, 11-աղբաման ոտնակով 1, 12-աղբաման ոտնակով 2	2-1650000 ՀՀ դրամ, 11- 350000 ՀՀ դրամ, 12- 675000 ՀՀ դրամ,	ՆԵՐԱԿ ԳՐՈՒՊ ՍՊԸ	05564022	ք. Գյումրի, փ. Մնջոյան 11/3	15.06.2026	«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՓԲԸ»	«ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-26/56» ծածկագրով հրավերի 8.11 կետ և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետ	Առկա չէ

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ **ՆԱՐԵԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ**